էին ընդ Լատինաց յեօթնեկի միանգամ փոխադարձ լուանալ. եւ ետ դնել անդ զերկուս աշտանակս Հայոց, զոր բարձեալ էին Յոյնք. եբարձ զլուսարարն կամ զպահապանն Յունաց 'ի Գերեզմանէն Քրիստոսի, և եդ անդ զոմն 'ի Լատինաց: Դարձոյց անդրէն առ Լատինս զստորին կողմն եօթն կամարաց Ս. Կուսին. և զկարասին զոր եդեալ էին անդ Յոյնք՝ ետ արկանել առ ընթեր որմոյ եկեղեցւոյ նոցին: Եւ հրաման ետ Լատինաց սալել զտանիս տաճարին Ս. Յարութեան մինչ 'ի գմբեթն եկեղեցւոյն Յունաց. Կախել զկանթեղս 'ի գերեզմանի Ս. Աստուածածնի եւ պատարագել անդ: Եւ ետ դատարկել յԱյրէն Ծննդեան Քրիստոսի զկանթեղս, զպատկերս և զայլ սպասս Յունաց՝ և արգել զնոսա 'ի պատարագելոյ անդ. ետ և զբանալի մեծի եկեղեցւոյն եւ ետ ցԼատինս: Եւ 'ի վերջոյ կալաւ զփոխանորդն և զթարգմանն և զոմանս 'ի միաբանից և 'ի ժողովրդոյն Յունաց՝ մատնեաց 'ի տուգանս և 'ի բանտս. սակայն ժողովրդականք յանձն առեալ զկրօնս Լատինաց՝ զերծան 'ի բանտէ: Ընդ այս անակնկալ գործ կուսակալին տագնապեցան Յոյնք՝ և դիմեցին առ դատաւորն, և հազիւ ուրեմն գողացան զմիտս նորա և բազում աղաչանօք ետուն գրել 'ի Դուռն դառն և ցաւագին գանկատանս ըզկուսակալէն, հակառակութեամբ և թշնամութեամբ մեծ անիրաւութիւնս և զրկանս արար հպատակաց Արքային, և 'ի հրապարակի ձաղանօք խայտառակեաց զմիաբանս և զազգն Յունաց, և եղեւ առիթ մեծամեծ վնասուց և նըւազելոյ ուխտաւորաց. ապա աղերս արկեալ խնդրեն յԱրքայէ, ըստ մտաց Կայսերական հրովարտակին՝ դարձուցանել վերստին առ Յոյնս զայն ամենայն տեղիս՝ զորս յափշտակեցին Լատինք, ՌՄԸ (1759):

Իսկ Օսմանեան Դուռն կամելով բառնալ զխռովութիւնս ազգաց՝ որ յաճախեալ էր յայնժամ, առաքեաց նոր հրովարտակաւ յԵրուսաղէմ զոստիկանն Միւնիւ Մուստաֆա էֆէնտի՝ որ էր այր բարեբարոյ, կարգաւորել զգործս Յունաց ըստ հրամանի Արքային: Եւ 'ի ժամանել նորա անդ՝ ոչ միայն յարգեաց զառաջին կարգադրութիւնս խնդրոյն Հայոց, այլ ուշադրութեամբ եհարց և քննութիւն արար. զի եթէ հակառակ կամ ընդդիմութիւն ինչ պատահեալ